ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՍՊԳՀԾՁԲ-19/32 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով երիտասարդների կրթության ծառայությունների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 21.08.2019թ. ժամը 10:00-ին էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արմենուհի Պետրոսյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամներ՝ Թամարա Միրզախանյան /գնահատող/

Նարեկ Առաքելյան /գնահատող/

Բացակայում էր՝ Մելանյա Բաղդասարյան /բացող/

Մարիանա Մինասյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Աննա Սիմոնյան

Հայտերի բացման և գնահատման մասին

1. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

1.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՍՊԳՀԾՁԲ-19/32» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլ. հասցեները
1	«Աութսորս» ՍՊԸ	info@osllc.am
	«ԷԼԻՏԱ ԷՍՎԵ» ՍՊԸ	elit.sv@mail.ru
2	«Ա/Ձ Գրիգոր Ավետիսյան»	info@smartdid.am

2. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

3. Տվյալներ յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

4. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

4.1 «Աութսորս» ՍՊԸ-ի և «Գրիգոր Ավետիսյան» Ա/Ձ -ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

4.2 «ԷԼԻՏԱ ԷՍՎԵ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես. Հավելված 2 գնային առաջարկի ընդհանուր գնի սյունակում բացակայում է տառերով գրված գումարը, ինչպես նաև Հավելված 2 գնային առաջարկը և Հավելված N1 դիմում-հայտարարությունը ստորագրված են մի անձի կողմից, որին ստորագրելու լիազորություն է տվել մեկ այլ՝ մասնակցի հետ կապ չունեցող կազմակերպություն (Հավելված N1 դիմում-հայտարարությամբ ներկայացված մասնակցի անվանումը և ՀՎՀՀ-ն չի համապատասխանում Լիազորագիր տված կազմակերպության անվանմանը և վերջինիս ՀՎՀՀ-ին):

5. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

5.1 Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները					
		«Աութսորս» ՍՊԸ		«ԷԼԻՏԱ ԷՍՎԵ» ՍՊԸ		Ա/Ձ«Գրիգոր Ավետիսյան»	
		Առաջարկված գները, ՀՀ դրամ					
		առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ
1	1200000	1080000	1080000	1000000	1200000	3622500	3622500

6. Տվյալներ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

6.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝

1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Աութսորս» ՍՊԸ-ին:

2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Գրիգոր Ավետիսյան» Ա/Ձ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

6.2 Մերժել «ԷԼԻՏԱ ԷՍՎԵ» ՍՊԸ-ի հայտը՝ հրավերով սահմանված պահանջներին չբավարարելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

7. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.

7.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 6-րդ մասով ընդունված որոշումը՝ շարունակել հայտերի գնահատման գործընթացը ARMEPS համակարգով՝ էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան:
7.2 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից համապատասխան եզրակացությունը ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, ժամը 10:30-ին, ք. Երևան, Կառավարական տուն 2, 303 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Ա. Պետրոսյան /նախագահ/

_____ Թ. Միրզախանյան

_____ Ն. Առաքելյան

_____ Մ. Բաղդասարյան

_____ Մ. Մինասյան

_____ Ա. Սիմոնյան /քարտուղար/